ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էրիզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Հ. Կարտոյանի (լիազորագիր տրված՝ 10.01.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21738-2019 գրությամբ «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) 26.12.2019թ. թիվ ՊՆ/02/2984-2019 գրության հիման, վրա 27.12.2019թ. թիվ 26/26-1/21738-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող

անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էրիզ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էրիզ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էրիզ» ՍՊԸ-ն 14.01.2019թ. կնքված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում 2019թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորվել է մատակարարել՝ կարտոֆիլ և գազար:

Հունիս-օգոստոս ամիսներին Ընկերության կողմից մատակարարված ապրանքները ՀՀ ՊՆ որոշ զորամասեր ընդունել են ամբողջությամբ, որոշ զորամասեր՝ մասնակի, իսկ որոշներ՝ տարբեր պատճառաբանություններով, մասնավորապես զորամասերում սննդի մատուցման ծառայությունը քաղաքացիական կազմակերպությունների կողմից իրականացնելու պատճառով, զինվորների թվաքանակի նվազման պատճառով, նախկինում ունեցած մնացորդի դեռևս սպառված չլինելու պատճառով չեն ընդունել Ընկերության կողմից մատակարարված ապրանքները:

Ընկերությունը նշել է, որ Ընկերության կողմից մատակարարվելիք որոշ ապրանքների մասով ՀՀ ՊՆ զորամասերում սննդի մատուցման ծառայությունը քաղաքացիական կազմակերպությունների կողմից իրականացնելու պատճառով կրճատել է, իսկ վերոնշյալ ապրանքների մասով ցուցաբերում է այլ մոտեցում:

Ընկերությունը նշել է, որ բարձրացված խնդիրները բազմիցս բանավոր ձևով հայտնել է ՀՀ ՊՆ աշխատակիցներին, իսկ 27.08.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ՊՆ-ին, սակայն վերջինս հարցին լուծում տալու փոխարեն սկսել է պայմանագրի միակողմանի մասնակի լուծման գործընթաց:

Ընկերությունը խնդրել է քննություն իրականացնելիս հաշվի առնել վերոնշյալ փաստերը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/12 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.12.2019թ. թիվ ՊՆ/02/2984-2019 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 24-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/12 ընթացակարգի շրջանակներում 16.01.2020թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2020/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքվել է ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական

բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.Պատվիրատուի կողմից 26.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/16-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21738-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.12.2019թ. թիվ ՊՆ/02/2984-2019 գրությունը և կից փաստաթղթերը, գործում առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման

օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքվել է ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 11.06.2019թ. կնքված N 1 համաձայնագրին կից Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարը պարտավոր է բանջարեղենի մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագերում նշված քանակների և ժամկետների:

Բանջարեղենի առաքումը զորամասեր իրականացվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի վարչության պետը 19.12.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի առ 11.10.2019թ. թիվ 2930/ԳՇ գրությամբ և ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված առ 07.10.2019թ. թիվ 2850/ԳՇ զեկուցագրով առաջարկվել է միակողմանի մասնակի լուծել ՀՀ ՊՆ և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով պայմանագիրը՝ ս.թ. սեպտեմբերի 15-ից չմատակարարված 4560կգ վաղահաս կարտոֆիլի մասով (26 օր ուշացումով) և 6930 կգ վաղահաս գազարի մասով (26 օր ուշացումով):

Ամփոփելով հայտնել է, որ հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները, առաջարկում է հանձնարարել ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչությանը, միակողմանի մասնակի լուծել պայմանագիրը չմատակարարված քանակների մասով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերությանն ուղղված 24.12.2019թ. թիվ ԴՎԱ/5660 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով գնման պայմանագրի

շրջանակներում Ընկերությունը 2019թ. սեպտեմբեր ամսին չի մատակարարել 4560կգ կարտոֆիլ վաղահաս և 6930 կգ գազար վաղահաս:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 24-ին միակողմանի մասնակի լուծել է ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 26.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/16-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էրիզ» ՍՊԸ-ի միջև 14.01.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով պայմանագրի համաձայն՝ կողմերի միջև 11.06.2019թ. կնքված N 1 համաձայնագրին կից Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարը պարտավոր է բանջարեղենի մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

Այսպիսով՝ կողմերի միջև 11.06.2019թ. կնքված N 1 համաձայնագրին կից Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ ***մատակարարը պարտավոր է բանջարեղենի***

մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագերում նշված քանակների և ժամկետների, մինչդեռ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չէ ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագիրը, որով կհավաստվեր Ընկերությանը 4560կգ կարտոֆիլ և 6930 կգ գազար ապրանքատեսակների քանակի և համապատասխան ժամկետի պահանջի ներկայացումը, որն էլ Ընկերությունը չի իրականացրել, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էրիզ» ՍՊԸ-ի կողմից իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 14.01.2019թ. կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով պայմանագրի էական խախտման փաստը, հետևաբար նաև Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2019թ. թիվ 26/26-1/21738-2019 գրությամբ «Էրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**